№ 20 ՄԱՐՏԻ 21 (ԱՊՐԻԼԻ 2) 1877 ՄԱՐՏԻ 21 (ԱՊՐԻԼԻ 2) № 20

ՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 7 ռուբլ, կէս տարվանը 4 ռուբլ։

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը, պ. Ծատուրեանի և Աբասխանեանի խանութում

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի *Тифлисъ. Редакція „Мшакъ“*

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 (Բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

Ամսիս 4-ին Նորին Կայսերական Բարձրութեան ՎԼԱԴԻՄԻՐ ԱԼԷՔՍԱՆԴՐՈՎԻՉԻ որդին ԱԼԷՔՍԱՆԴՐ ՎԼԱԴԻՄԻՐՈՎԻՉԸ ի Տէր փոխեցաւ ծանր հիւանդութենից յետոյ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հայոց ընտանիքի պատկերը—Ներքին տեսութիւն։ Նամակ Երևանից։ Նամակ Խմբագրին։ Ներքին լուրեր։—Արտաքին տեսութիւն։ Թուրքիա։ Անգլիա։ Գերմանիա։ Նամակ Գերմանիայից։ Նամակ Պարսկաստանից։—Խառն լուրեր։—Յայտարարութիւններ։—

ՀԱՅՈՑ ԸՆՏԱՆԻՔԻ ՊԱՏԿԵՐԸ

Եթէ ուշադրութեամբ հետազօտէք մեր հայոց ընտանեկան կեանքը, կը համոզվէք որ մեր ընտանիքի կազմակերպութեան հիմնական սկզբունքները կայանում են երևոյթապէս ամենախիստ բարոյականութեան վրա։

Եւ ճշմարիտ, ըստ երևոյթի, ծնողները քարոզում են իրանց երեխաներին, նրանց ամենամատաղ հասակից՝ ազնուութիւն և բարոյականութիւն, ի հարկէ անդադար իրանց սեփական անձը զաւակներին որպէս բարոյականութեան, ազնուութեան և սրբութեան օրինակ դնելով։ Եւ նշանաւոր է որ այդ անում է իր ընտանիքներում մեր բոլոր հասարակական դասակարգերին պատկանող հին սերունդը։

Երեխան, և երկար ժամանակ երիտասարդը, համոզված է լինում որ հին սերունդը իր անհասանելի, անմատչելի օլիմպիական ամպերի վրա նստած անսխալական սրբութիւն է....

Երիտասարդը հասակ է առնում, փորձվում է,—և նոր է սկսում հասկանալ այդ իրան տուած (գոնէ խօսքերով) խիստ բարոյական դաստիարակութեան գաղտնիքը, համեմատելով խօսքերը գործի հետ....

Եւ ինչ է տեսնում նա՝ երեխայութեան ժամանակ հին սերունդից նրան քարոզած սրբութիւնը, բարոյականութիւնը և ազնուութիւնը ուրիշ բան չէր, եթէ ոչ մի միջոց, մի զէնք բռնաւորութեան ձեռքում՝ քնացնել նոր սերունդի մէջ քննադատութեան ոգին, մեռցնել անձնապաշտպանութեան ձգտումները, դարձնել իր զաւակից կրաւորական, համբերող էակ, որպէս զի ապագայում իր համար պատրաստի հեզութեամբ և հնազանդութեամբ ամեն կամայականութիւն, բռնաւորութիւն և ճնշում տանող հերէզ։

Հայոց ընտանիքը, երկար ժամանակ մահմետականութեան ազդեցութեան տակ գտնվելով, ընդունել է այդ ասիական, պարսկական բռնաւորութեան ոգին և գործունէութեան եղանակը։

Մահմետականութեան մէջ հոգևոր կամ մարմնաւոր իշխանութեան ներկայացուցիչը քարոզում է ժողովրդին անպայման բարոյականութիւն, հնազանդութիւն, անձնուիրութիւն, ազնուութիւն, անձնուրացութիւն այն աստիճան, որ կատարելապէս կրաւորականացնում է մարդուն,—և այն ժամանակ նա հասաւ իր նպատակին՝ կրաւորական, ստորացրած, բթատրած, ամեն տեսակ հեղինակութիւն, ամեն տեսակ իշխանութիւն անպայման անսխալական համարող մահմետական ամբոխը երբէք չէ համարձակվի որ և է բան կասկածել, քննադատութեան տակ ենթարկել։ Նա կը համբերէ ամեն տեսակ ճնշում և բռնաւորութիւն և երբէք չէ նկատի որ և է պակասութիւն նոցա մէջ, որոնք քարոզել են նրան բարոյականութիւն և ազնուութիւն։ Իսկ եթէ կը նկատի էլ,—այնքան կրաւորական է դարձած, որ չէ համարձակի բողոքել, որովհետև անհնազանդութիւնն էլ անբարոյականութիւն է համարում։

Ահա նոյն իսկ այդ մահմետական ոգին մտած է մեր հայ-քրիստոնեայ, մահմետական ոգով սընված ընտանիքը։

Մեր հին սերունդը գործ է դնում իր ընտանիքում այդ ասիական բռնաւորութեանը յատուկ խորամանկ և ճարպիկ դաստիարակութեան միջոցը։

Նա ստորացնում է, ստրկացնում է, կրաւորականացնում է նոր սերունդը, նրան իբրև թէ խիստ բարոյականութեան վրա հիմնված անպայման հնազանդութիւնը քարոզելով, որ երեխաները չը կարողանան որ և է քննողական ձգտումն ունենալ։ Նա քարոզում է այն աստիճան կուրօրէն հնազանդութիւն, իբր թէ ընդհանուր բարոյական սկզբունքների և մինչև անգամ աւետարանի ճշմարտութեան վրա հիմնվելով, որ երեխան չը կարողանայ նկատել նոյն իսկ քարոզողի, բարոյական իրան ցոյց տուող հին սերունդի խորին անբարոյականութիւնը։ Նա աշխատում է մինչև այն աստիճան քարոզել ազնուութիւնը, որ հասցնելով իր զաւակին պարզ, միամիտ, իդէալական ազնուութեանը, ապահով կարողանայ լինել որ այդ պարզ, միամիտ, իդէալական ազնիւ էակը երբէք չէ կասկածի նոյն իսկ այդ տեսակ ազնուութիւն քարոզողի մէջ խորին անազնուութիւնը։

Մի և նոյն ժամանակ մեր հին սերունդը այն աստիճան հնազանդութեան զգացմունքը արմատացնում է զաւակների մէջ, որ երեխան հասակ առնելով, երիտասարդ դառնալով,—եթէ նկատէ էլ հին սերունդի մէջ անբարոյականութիւնը, զգայ էլ իր վրա նրա հարստահարութիւնը,—երբէք չէ յանդգնի, մինչև անգամ անբարոյականութիւն կը համարէ բողոքել այդ անազնուութեան կամ անբարոյականութեան դէմ, որովհետև նա կրաւորական է դարձել...

Այսպիսով մեր հին սերունդը հասնում է իր ընտանիքում նոյն հետևանքներին, որոնց մահմետականութիւնը, որից նա ուսել է այդ բռնաւորութեան ճարպիկ միջոցները, հասնում է ամբոխը կառավարելու գործի մէջ։ Նա այն աստիճան աշխատում է իդէալական կերպով բարոյականացնել նոր սերունդը, որ այդ վերջինը չը նկատի, չը կասկածի անգամ հին սերունդի ամենասարսափելի անբարոյականութիւնը, մի և նոյն ժամանակ այն աստիճան կրաւորականացնում է նրան, քարոզելով նոր սերունդին անպայման հնազանդութիւն, մինչև անգամ իր նպատակների համար կրօնական զգացմունքը գործածելով, որպէս կատարեալ հնազանդեցնող միջոց, որ եթէ նոր սերունդը նկատի էլ իր դաստիարակողի խորին անբարոյականութիւնը, անազնուութիւնը և զգայ էլ իր վրա նրա հարստահարութիւնը,—չէ յանդգնի բողոքել, պատերազմել։

Բայց ինչով է վերջանում, ինչ հետևանքի է հասնում այդ հայոց ընտանեկան գեղեցիկ դաստիարակութիւնը....

Նոր սերունդը համոզվելով որ սուրբ, անսխալական, բարոյական, ազնիւ կարծված հին սերունդը այդ յատկութիւններին բոլորովին հակառակ յատկութիւններ ունի, և մի և նոյն ժամանակ չափից դուրս կրաւորական լինելով որ քաջութիւն ունենայ բողոքել, պատերազմել,—մեծ մասամբ վերջը ինքն էլ նոյնքան անբարոյական, անազնիւ, հարստահարող է դառնում որքան և հին սերունդը։

Ահա՛ հետևանքը....

Եւ կամենո՞ւմ էք որ մեր հասարակութիւնը առաջ գնայ, զարգանայ, լուսաւորվի՝ ունենալով այդ տեսակ զզվելի, մահմետական խորամանկ, պարսկական բռնաւորական սկզբունքների վրա հիմնված և իրան քրիստոնէական միայն անուանող թշուառ ընտանեկան կազմակերպութիւնը....

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

13 մարտի 1877

Եթէ թոյլ կը տրուի ինձ, ես կամենում եմ մի կարճ նամակ նուիրել այս տարուայ Երևանի թուրքերի ծօնած բայրամի առիթով, որը համեմատելով անցեալ տարիների հետ կարծես այս վերջինը կրում է իւր վրա աւելի շքեղ պատկեր։ Ամսոյս 9-ն երեկոյեան քաղաքի հրապարակի վերա հրախաղութիւն էր ի պատիւ բայրամի, բաւականաչափ վառօդ դրեթէ երկու ժամ զարդեցնում էր Երևանի մթնոլորտը։ Առաւօտը բոլոր մահմետական տարրը ուրախութեան մէջ էր, թուրքերը խմբեր կազմած, միմեանց ետևն այցելելով շնորհաւորում էին բայրամը։ խանները, բեգերը որպէս թուրքերի առաջնակարգ անձինքը, եթէ դոցանից մինը մինչև չլինքն էլ պարտքի մէջ խրուած լինի, այնու ամենայնիւ այդ օրը նորա ախոռից կարող է դուրս գալ մի աշխոյժ նժոյգ իւր տիրոջը ցանկացած տները այցելութիւն տանելու։ Սակայն հետաքրքիր է նայել որպէս արշաւում է այդ գեղեցիկ և հրապարա անասունը և ինչ ինքնահաւան դիրք ունի բռնած նորա վերա արևելքի իշխանը։ Առհասարակ բայրամի օրերը սովորութիւն է դարձած որ մերձակայ գիւղերից գումարվում են քաղաքը փահլեվաններ, (մենամարտողներ), իւրաքանչիւր փահլեվան ունի իւր խումբը որին պատկանում է ինքը անբողջապէս. տեսնում ենք զանազան խումբեր գիւղացիների, դոցա առաջից վեհանձնաբար շարուղը՝ այդ խմբի Հերքուլեսն է. բայց ինչ պատկեր է ներկայացնում մենամարտութիւնը դա արդարև նկարագրել արժանի է և գուցէ դորանով հեռաքրքրուէին շատերը։ Նախ քան խօսելը դրա վերա, պէտք է չը մոռանալ որ երևելի փահլեվանները առաջ քան բայրամը վայելում են ինքնդարար կերակուրներ, հեռու են մնում մինչև անգամ ամուսնու անկողնից որպէս զի աւելի սյժ և զօրութիւն կեղրոնացնեն իրենց մէջ։ Մենամարտութեան բեմը ներկայացնում է մի տափարակ տեղ կամ մի կանաչաբոյս մարգագետին, ուր առանց տոմսակի ամենքը իրաւունք ունեն ձրի նայել։ Զուտման մենամարտութեան համար որոշած եղանակը սուլելով քմաց է տալիս այդ թատրօնի վարագուրի շուռտով բացուելը։ Բեմը մի ընդարձակ հրապարակ լինելով դորա շուրջը կանգնած են հանդիսատեսներ, գիւղական խմբերը իւրաքանչիւրը կանգնած է իւր փահլեվանի դրօշակի տակ։ Մի կարճ ազմուկից յետոյ տեսնում էք բեմի վերա երկու հաստամարմին պարոններ գրեթէ մերկացած հագուստից, դոքա իսկոյն չեն յարձակվում միմեանց վերա այլ հրապարակի շուրջը տալիս են շրջաններ կատարելով մի քանի մարմնամարզական շարժողութիւններ, որից յետոյ մեր հերոսները փաթաթվում են միմեանց։ Այժմ հետաքրքիր է նայել, թէ ինչ միջոց և հնարք նոքա գործ են դնում միմեանց գետնին տապալելու, վայ նորան որի թիկունքը դիպչում է գետնին, փառք նորան որը կատարում է այդ յաղթութիւնը։

Ա. Եր.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիս, 15-ին մարտի

Պ. Խմբագիր. ձեր պատուական լրագրի № 16 մէջ կարդացէ՛ մի յօդուած, որով հրատարակել

էիք մարտի 2-ին անցքը, որ պատահեց ինձ հետ ոչ հեռու Թիֆլիսի պօլիցիայից վիրաւորելով ինձ ատրճանակով դուրգար Սարգիս Պապովը, որոյ պատճառն, որպէս դուք լսել էք, եղել է չը տալը այս ուստին իմ կողմից իւր վարձը, մօտ 3000 ռուբլի, որ նա պարտ էր իբր ստանալ ինձանից Մօղնու եկեղեցւոյ ուսումնարանների շինութեան համար, իմ երեսփոխանութեան ժամանակը։

Որովհետև ինձ ատրճանակով վիրաւորելոյ պատճառը սաստիկ աղճատած է այս յօդուածումը, վանորոյ ճշմարտութիւնը վերականգնելոյ համար չատպում եմ բացատրել իսկական իրողութիւնն գործոյն։

1874 և 1875 թուերին, երբ ես երեսփոխան էի Թիֆլիսի Մօղնու եկեղեցւոյ, ձեռնարկեցի շինութեան երկու ծիսական երկսեռ ուսումնարանների, նմանապէս լայնացնելոյ և Մօղնու քուչէն։ Այս բոլոր շինութիւնների կատարելը յանձնեցի ես կապալով (փոդրաթով) որպէս փոդրաչիկի Թիֆլիսաբնակ դուրգար Սարգիս Պապովին, որի հետ և կապուեցայ երեք կապալներով։ Փողերի մուտքի և ծախքի համար ստացայ Կոնսիստորիայից մի ժապաւինեալ մատեան։ Շինութիւնի ժամանակը այս մատեանումը գրում էի արած ծախսը մասը մասը, այնպէս որ երբ Պապովը առաջին ստացած մասը ծախս էր անում շինութեան վերա, և ես երբ ստուգում էի այս տուած գումարի արած ծախսը, այնուհետև տալիս էին նրան երկրորդ մասը կանխապէս, ստորագրել տալով ամեն անգամ Պապովին մատեանում ստացած մասը դրամոց, և այս օրինակով շարունակվեցաւ շինութիւնը մինչեւի վերջը։ Պապովը չունէր իւր անձնական գումար շինութիւնը շարունակելոյ համար. և մինչեւի չէր ստանում ինձանից մի մասը գումար դրամոց, չէր կարողանում գործը առաջ տանել։ և իսկոյն դադարեցուցանում էր շինութիւնը։ Այս կարգը լաւ հասկանալի է այն անձանց, որք շինութիւն են ունեցել այսպիսի դուրգար կամ կալատոյի ձեռքով։ 1875 թուին բոլոր շինութիւնները վերջացան, Պապովի հետ բոլոր հաշիւները աւարտեցի, և ապա հաշուամատեանը իւր բոլոր պատկանեալ դոկումենտներով ներկայացրի տեղական Կոնսիստորիային։ Երբ որ ամեն շինութիւնները արդէն լրացած էին և մենք մեր մէջը բոլոր դրամական հաշիւները վերջացուցինք, այն ժամանակը 4-ն օգոստոսի 1875 ամի տուեց Պապովը ինձ մի առանձին ստորագրութիւն որպէս վերջնական ապահովագիր դրականապէս, որով նա հաստատում է թէ ստացել է ինձանից լիովին երեք կոնտրակտների զօրութիւնով բոլոր իւրեան հասանելի գումարը, որ և այս ստացածները ստորագրած ունի նա մատեանումը, և թէ նա այնուհետև ոչինչ պրետենզիայ չունի ինձ հետ։ Այս դոկումենտը այժմ գտանվում է ինձ մօտ, և ունեմ ներկայացնել իւր ժամանակին ուր հարկն է։ Այս դոկումենտները որպէս ընթերցողը կը նկատէ տուել է ինձ Պապովը ոչ թէ որպէս ստացական դրամոց, (որովհետև որա համար կար առանձին ժապաւինեալ մատեան) այլ որպէս ապացոյց թէ մեր մէջը ամեն դրամական հաշիւները վերջացան և այլ ես ոչինչ պրետենզիայ չունի ինձ հետ։

Երբ որ մեր հաշիւները վերջացած էին և մատեանը իւր դոկումենտներով ուղարկած էի ես ի Կոնսիստորիայն. մի անգամ եկաւ ինձ մօտ Պապովը և յայտնեց թէ նա վերոյիշեալ կապալումը կրեց վնաս մօտ 3000 ռուբլի, և ագետալի խօսքերով շարժելով իմ կարեկցութիւնը իւր թշվառ վիճակի վերա, խնդրեց միջնորդել ուր հարկն է տալ նորան վարձատրութիւն ինչ դրամական։ Չիջանելով Պապովի խնդրին, բայց միւս կողմից կամենալով ճշդիւ ստուգել հիմնաւորութիւնը նորա գանգատանաց, ես յանձնեցի նորան չինել նախահաշիւ և ցուցակ շինութեան վերա գործածած մասալլաների և ուստաներու վարձի։ Սորանից յետոյ որպէս էկսպերտ հրաւիրեցի ինձ մօտ քաղաքիս մէջ յայտնի բարեխիղճ և գործոյն տեղեակ ուստաներ՝ ուստաբաշի Խէչօ Նաղարովին և միւս ուստայ կալատոյ Գալուստին ստուգելոյ ներկայացրած Պապովից նախահաշիւը և ցուցակը։

Այս պատուելի ուստաները քննելուց յետոյ եկան այն եզրակացութեան թէ Սարգիսը չատ անյաջող դէպքերում կարող էր կրել վնաս ոչ աւելի քան 800 ր. և մինչև անգամ այս վնասը չէ նկատվում։ Զը նայելով սորան ես խոստացայ Պապովին միջնորդել ուր հարկն է տալ նորան ես 500 ր. բայց նա չը համաձայնեցաւ և գնաց։ Սորանից մի քանի ժամանակ յետոյ, ես լրացնելով իմ երեք տարուայ ժամանակը արձակվեցայ երեսփոխանական պաշտօնից։ Անցեալ տարի մի անգամ Պապովն եկաւ ինձ մօտ և յանդուգնն կերպիւ սկսեց պահանջել ինձանից ոչ թէ 3000 ր. այլ 800 ր. իբր թէ այս փողը պատկանում է նրան որպէս նէուստոյկայ (տուգանք)։ Այսպիսի յանդգնութիւն և ապօրինի պահանջը ստիպեց ինձ ցոյց տալ դուռը Պապովին. հրաւիրելով նորան պահանջել ինձանից այսպիսի նէուստոյկան դատաստանով։ Սորանից յետոյ Պապովը ժամանակ առ ժամանակ պատահելով ինձ ճանապարհին յանդգնաբար յայտնում էր ինձ իւր պահանջը (եթէ կարելի է իրաւացի համարել)։ Բայց նա ոչ երբեք այսպիսի պահանջները չէր յայտնում օտար վկաների առջեւ. և միշտ աշխատում էր և որոշում էր այնպիսի րօպէներ, երբ ես լինում էի բոլորովին միայնակ. և այն ժամանակը նա միայն մօտենում էր ինձ՝ արդէն յայտնի և ապօրինի պահանջներով և երբեմն խնդիրքներով։ Լաւ գիտենալով, որ նա չատ անյաջող գործքերումը կորցնելով իւր բոլոր կարողութիւնը մինչև հասել էր այս աղետալի դրութեան, և ունենալով ի նկատի, որ վերջին տարիներումը մեր քաղաքումը չատերը գործ են ածում փողերի դուրս քաշելու յանդգնութիւնով և ահ ու երկիւղ տալով, ես կարծում էի թէ Պապովը նայում է իմ վերա, որպէս հարուստ մարդու վերա, որ կարող է իւր հանգստութեան համար հանել նորան բաժին իւր կարողութիւնից։ Այս պատճառով ես չէի կարող չը համարել Պապովին այսպիսի նորա անելը դրութիւնիցը ստիպուած բարոյապէս խոնարհուած թախանձելու ողորմութիւն։

Փետրվարի էկսին ստացայ իմ տանու ծառայի ձեռօք յանձնած նորան անծանօթ մարդուց իմ անունով ստորագրր մի նամակ, որի մէջ նամակի անյայտ հեղինակը սպառնում է ինձ մահ գիշեր կամ ցերեկ, եթէ չեմ վերջացնել հաշիւը այն ուստի հետ, որ ես իբր պարտական եմ։ Նամակագրի մասին այլ ես չէր մտում ոչինչ կասկած,—սա էր իմ ծանօթ Պապովը, որ և չը թողեց իւրեան երկար սպասելու։ Ամեն օր նամակի ստանալուց յետոյ սպասում էր իմ տան մօտ և ամեն ուրեք, ուր և գնում էի հետս էր պատում բաւական հեռու ինձանից։ Այս հանգամանքը ստիպեց ինձ 18-ն փետրվարի դիմել պարոն ստարշի Պօլիցէյմէյստարին գաղտնի գրաւոր յայտարարութիւնով, ներկայացնելով նոյն իսկ ստացած նամակս, խնդրելով առնել կարգադրութիւն առ ի ապահով պահելու իմ անձը ապագայ վտանգից։ Պարոն Պօլիցէյմէյստարը, որպէս երևեցաւ, չէ տուել օրինաւոր ընթացք այս իմ յայտարարութեանը, և ուշնչով չէ կարողացել զգուշացնել չարագործին, որը յանդգնեցաւ իւր սպառնալիքը իրագործել մարտի 2-ին։ Այս օրը Սարգիս Պապովը սովորաբար սպասում էր ինձ քուչումը, երբ ես անցնում էի մօտեցաւ ինձ, առաջարկեց մի թուղթ, կամենալով, որպէս երևում էր զրաղեցնել ինձ կարդալով, և այն ժամանակը աւելի յարմար արձակել ատրճանակը։ Բայց չընդունեցի այն թուղթը, յետոյ չարագործը հանելով իւր պալտօի տակից ատրճանակը ուղղելով դէպի ինձ արձակեց, և նա տեսնելով որ ես վայր չընկայ, աշխատում էր երկրորդել ատրճանակի արձակելը. նոյն ժամին անկայ նորա վերա երկու ձեռքով, ըմբռնեցի որպէս նորա ձեռները նմանապէս և ատրճանակը, մինչև հասաւ ինձ օգնութիւն ճարտարապետը Օսիպովը, որ և խլեց դաւաճանից ատրճանակը, և տարան նորան պօլիցիա։

Ճշմարտութիւնը այս իմ խօսքերի Պապովի հաշուի մասին, այլ և պատճառը, որ ստիպել է նորան առնել այսպիսի չարագործութիւն վերահասու կը լինի և կը քննէ օրինաւոր պատասանը։ Յուսամ դի դատաստանական իշխանութիւնը, կը որոնէ Պապովի դրդողներին և կը յայտնագործէ նոցա չարութեան խորհուրդը։

Արդոյ խմբագիր, ինչ որ կը վերաբերի իմ անձնաւորութեանը, որ դուք նկարագրել էք ձեր զրչի յատուկ գոյներով, այդ մասին ես պարտաւորութիւն կը համարեմ իմ շնորհակալութիւնը մատուցանել ձեզ առանձին նամակաւ, կամ անձամբ տեսութիւն անելով, յայտնել ձեզ ըստ արժանւոյն իմ մտերմութիւնը։

Վասիլ Խօջայեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՔՈՒԹԱՅԻՍԻՑ մեզ գրում են՝ «Ձեր լրագրի № 16-ի մէջ ներքին լուրերում հաղորդված էր Քութայիսից որ տեղիս ուսումնարանի նոր հոգաբարձութեան հաստատման թուղթը նոյեմբեր ամսից մինչև այժմ դեռ չէ ստացված և որ հասարակութեան մէջ կասկածներ կան հայր Դաւիթ Եարալեանցի վրա։ Այժմ, ճշմարտութիւնը վերականգնելու համար, ես որպէս գործին մերձաւոր անձն, պարտաւորութիւն եմ համարում յայտնել հրապարակաւ որ երբ մենք դիմեցինք տէր հօրը այս առարկայի վերաբերութեամբ, հարցնելով թէ ուր մնաց հոգաբարձուների ընտրողական թուղթը, նա մեզ պատասխանեց թէ ուղարկել է հաստատելու, բայց թէ ինչ պատճառով ուշացրին, այդ իրան անյայտ է։ Այժմ նորից հարցրի տէր հօրից, և նա ինձ ցոյց տուեց մի գործ հետևեալ վերնագրով՝ «գործ յաղագս ընտրութեան հոգաբարձուաց երկսեռ ուսումնարանաց մերոց քաղաքիս Քութայիսու», որից երևեցաւ որ նա նոյն 1876 թուի նոյեմբերի 23-ին, այսինքն ընտրութեան երկու օրից յետոյ ուղարկել էր ընտրութեան թերթը 198 համարով թեմական վերատեսուչ Տէր-Պետրոսեանին, որ սա ներկայացնէ հաստատութեան համար որտեղ հարկաւոր է, բայց մինչև այժմ պատասխանը չէ եկած։»

—

Մարտի 15-ին երեկոյեան ԹԻՖԼԻՍԻ գլխաւորական ընկերութեան դահլիճում կայացաւ առաջին նիստ «Կովկասեան ընկերութեան կենդանիների ապահովութեան» հիմնադիրների։ Մանրամասն կարդացվեցաւ անասնաբոյժ պ. Մեսչերսկու գրած պրօէկտը այդ ընկերութեան կանոնադրութեան, և այդ պրօէկտի մէջ մի քանի փոփոխութիւններ անելուց յետոյ ներկայ գտնվողներից ընտրվեցաւ մի մանտատորով, որին յանձնվեցաւ վերջնական կերպով մշակել կանոնադրութիւնը, ներկայացնել նրան կառավարութեան հաստատութեանը և ձեռք տալ ընկերութեան կազմակերպութեանը։ Մանտատորովի անդամները ընտրվեցան՝ պ. պ. Տալիզին, Սիպանի, Մեսչերսկի, Տրեսկովսկի և Բօլոտով և նրանց կանդիդատները՝ պ. պ. Սօֆիանօ, Ջայզլից և Ժէզրինսկի։ Այս ընկերութեան անդամներ կարող են անիսիր թէ մարդիկ և թէ կանայք լինել, երեք ռուբլ տարեկան վճարքով։

—

Մարտի 13-ին ԹԻՖԼԻՍԻ թատրոնում պ. Աբգարեանցից տուած ասիական կոնցերտից գոյացաւ ընդամենը՝ 325 ռուբլ. և 20 կոպէկ մուտք, որից դուրս գալով թատրոնի վարձ 100 ռուբլ, զինուորական երաժշտութեան վարձ 25 ռուբլ, կոնցերտին մատնակցողների վարձ՝ 40 ռուբլ, և այլ մանր ծախսեր 56 ռուբլ 20 կոպ. ընդամենը ծախս եղած է 221 ռ. 20 կոպ. ուրեմն զուտ արդիւնք մնաց 104 ռուբլ։ Այդ գումարից պ. Աբգարեանը մի երրորդական մասը նուիրելով յօգուտ հրդեհից վնասված վանեցիների, յանձնեց մեր խմբագրութեանը 34 ռուբլ և 67 կոպէկ, որ գումարը պէտք է իր նշանակութեանը հասցնենք։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹԻՒՐՔԻԱ

—

Ռուս «Голосъ» լրագիրը հաղորդում է որ Կ. Պօլսում խռովութիւնները շարունակվում են ժողովրդի մէջ։ Քանի մի օր սրանից առաջ սօֆթաների զինաւորված խմբերը շրջապատեցին նախ մինիստրութեան շէնութիւնը, իսկ յետոյ դիմեցին դէպի պալատը, պահանջելով որ այժմեան մի քանի մինիստրներ հեռացրած և հրաժարեցրած լինեն իրանց պաշտօններից, իսկ Միդհաթ-փաշան կրկին յետ կանչված լինի։ Բազմաթիւ կալանաւորութիւններ են կատարվում։ Ամեն րոպէ երևան են գալիս զանազան պրօկլամացիաներ թէ մեչիտների, թէ փողոցների պատերի վրա կպցրած։ Նոյն լրագիրը հաղորդում է որ Թիւրքաց տէրութիւնը պատերազմական մեծ պատրաստութիւններ է տեսնում։—Թիւրքաց պարլամենտը բացվելով, առաջին նիստում կարդացվեցաւ սուլթանի գահի ճառը։ Այդ ճառը կարդաց սուլթանի առաջին քարտուղարը։ Պարլամենտի բացմանը ներկայ էին բոլոր մինիստրները, քաղաքական և հոգևորական կոչման բոլոր բարձր ատիճանաւորները, սենատօրները և օտար պետութիւնների ներկայացուցիչները, բացի գերմանական և ռուսաց ներկայացուցիչներից, որոնք իրանց տեղ ուղարկեցին իրանց թարգմանիներին։ Թիւրքաց սենատի նախագահ նշանակվեցաւ Սերվեր-փաշա։ Սենատօրների թիւը 30 է, որոնցից 23 մահմեդականներ են և միայն 7 ոչ-մահմեդականներ, այն է երկու հայ, երկու հրէայ, երկու յոյն և մի բօլգարացի։—Մեզ գրում են Կ. Պոլսից որ Փոքր-Ասիայի Թուրք երկրագործ ազգաբնակութեան բաւական մեծ մասը փախչում է զինուորագրութենից։ Թիւրքաց տէրութիւնը այժմ գաղանի բանակցութիւններ է անում քուրդ ցեղերի պետերի հետ, որ նրանք զօրք տան իրան։ Ասում են որ այդ դիտաւորութիւնը իրագործվում են։ Ուրեմն Թիւրքաց տէրութիւնը զինաւորում է քուրդերին, որոնք աւելի էլ անխնայ կը ճնշեն թէ հայ, թէ Թուրք խաղաղ երկրագործ դասը։—«Բոյսերի հեռագրական ընկերութիւնը» հաղորդում է Լօնդօնից որ Թէհրանից ստացած լուրերին նայելով Փոքր-Ասիայում շատ զօրք է կենտրոնացած։ Թիւրքաց տէրութիւնը անդադար մոռնցնում է իր զօրքերը Կովկասեան սահմաններին։ Այդ զօրքի թիւը հասնում է այժմ 50,000-ի, բացի Բատումի մէջ կենտրոնացած 12,000-ից և Արթրանի մէջ 6000-ից։ Դարսում նոյնպէս զօրքի նշանաւոր քանակութիւն կայ։

ԱՆԳԼԻԱ

—

Վերջին հեռագրերը որոնք Լօնդօնից անցեալ օրերը ստացված էին, բաւական յուսահատական էին։ Պատերազմը երևում էր անփախչելի, Ռուսաստանի և Անգլիայի մէջ արևելեան խնդրի վերաբերութեամբ կազմված պրօտօկոլի (արձանագրութեան) ստորագրութեան մէջ անհամաձայնութիւններ յայտնվեցան երկու պետութիւնների մէջ։ Փողի կուրսերը եւրօպական բոլոր բօրսաների վրա պատերազմի երկիւղից սկսեցին իջնել։ Այժմ կրկին ստացվեցան նոր հեռագրեր հանգստացնող բովանդակութեան։ Անգլիական տէրութիւնը դիտաւորութիւն ունի նոր պրօտօկոլ կազմել արևելեան հարցի վերաբերութեամբ։ Լսվում է մի և նոյն ժամանակ որ Ռուսաստանն էլ յօժար է նորից սկսել Անգլիայի հետ յարաբերութիւնները ուրիշ հիմքերի վրա պրօտօկոլ կազմելու համար։ Ի՞նչ է այդ պրօտօկոլը,—դա դիպլօմատիական գաղտնիք է, ի հարկէ, և մեզ անյայտ է։ Լօնդօնում բօրսան կրկին շունչ քաշեց, կուրսերը կրկին բարձրանում են, յուսալով թէ արևելեան խնդիրը խաղաղութեամբ կը վերջանայ։

Բայց մինչև որ եւրօպական պետութիւնները մտածում են Թիւրքիայի վրա, հոգում են Թիւրքիայի բարեկարգութեան մասին, աշխատում են մի վերջնական և խաղաղական կերպարանք տալ արևելեան խնդրին,—այդ ժամանակ Թիւրքաց պարլամենտը, ինչպէս հաղորդում է մեզ հեռագիրը, միաձայն յայտնում է թէ ընդդէմ է եւրօպական պետութիւնների Թիւրքիայի ներքին գործերի միջամտութեանը։

ԳԵՐՄԱՆԻԱ

—

Ընթերցողը յիշում է թէ Էլզաս-Լօթարինգիայի նահանգները ուղարկեցին գերմանական ազգային-ժողովը (Բայխստագ) մեծ մասամբ առաջնորդներին։ Նորերումս քննվեցաւ Բայխստագում մի նոր օրէնքի ծրագիր, որի զօրութեամբ Էլզաս-Լօթարինգիայի համար հրատարակվող նոր հասարակական օրէնքները, պէտք է հրատարակվեն կայսրի կամքով, համաձայնութեամբ Դաշնագրական Խորհրդի, բայց առանց Բայխստագի մասնակցութեան, և բացի սրանից եթէ հրատարակվող օրէնքներին իր հաւանու-

թիւնը կը տայ Էլզաս-Լոթարինգիայի կառավարչական մանաժողովը։ Էլզասական բողոքի կուսակցութեանը պատկանող պատգամաւորները խօսեցին առաջարկվող օրէնքի դէմ, գանգատվելով թէ Էլզաս-Լոթարինգիան շատ վատ է կառավարվում և հաստատում էին թէ Էլզասի յիշեալ կառավարչական կոմիտեաը չէ կարելի համարել այդ երկրի համար օրինաւոր կառավարութիւն, որովհետև նա կազմված չէ ժողովրդի անմիջական ընտրութիւններից։ Իսկ առաջնորդ կուսակրութեան ներկայացուցիչները համաձայն էին վերև յիշված օրէնքի պրոյեկտի հետ, մանաւանդ Բերգման և Նեէգանս պատգամաւորները, համարելով այդ օրէնքը Էլզաս-Լոթարինգիայի ապագայ կանոնաւոր կազմվածքի համար հաստատ գրաւական, և նոր նահանգների Գերմանիայի հետ հաշտութեան միջոց։ Պ. Նեէգանս վերջացրեց իր խօսքերը հետևեալ նկարագիր անելով իր կուսակցութեան՝ «Եւ մենք էլ կառավարչական կուսակցութիւն չենք, ասեց նա, բայց և սիստեմական ընդդիմադրութեան կուսակցութիւն չենք։ Մենք մի կուսակցութիւն ենք, որ ցանկանում է միշտ առաջ գնալ։ Մինչև որ ազատութիւնը առաջ է գնում, մենք նրա կողմը կը պահենք։»

ՆԱՄԱԿ ԳԵՐՄԱՆԻԱՅԻՑ

—

Մինխէն 10 մարտի 1877

Վերջին տարիներս Մինխէնի մէջ ընդհանուր շարժումը, երթեւեկութիւնը, առևտրական թէ տնտեսական հաղորդակցութիւնները և իբրև այս բոլորի հետևանք բնակչաց թիւի բազմանալը և քաղաքի ընդարձակուելը մեծ յառաջադիմութիւն են ցոյց տալի, որոց ապացոյց կարող են լինել անթիւ ու անհամար նոր շինուած և շինվող տները, ամբողջ երկայն ու լայն, բոլորովին նոր գոյացած փողոցները, հրապարակները, ձիաքարշ երկաթուղին և այլն. և պահանջը օրից օր աւելանում է։ Բայց այս ձգտումը, այս փափագը դէպի ընդլայնումն, դէպի մեծութիւն լոկ նիւթական կողմին չը պէտք է վերաբերել. մշտաւոր և բարոյական աշխարհը, գիտութեան, արհեստի, գեղարուեստի աշխարհը նոյնպէս մեծ եռանդով ընդլայնում է իւր շրջանը և սորա թէ համայնքին թէ կառավարութեանը ուղղած օրից օր աւելի զգալի պահանջները նոյնքան անհրաժեշտ և նոյնքան իրաւացի են, որքան միւսերը։ Պէտք է ասել որ ժողովրդական ձրիավարժ ուսումնարանների թիւը վերջին տարիներս ահագին քանակութեան է հասել և ինչպէս սոքա նոյնպէս և գիտութեան, արհեստին և գեղարուեստին վերաբերեալ բարձրագոյն դպրոցները ամենագեղեցիկ և բաւարար զրութեան մէջ են։ Սակայն պահանջը, որ այս անգամ «գերմանական ինժեներների և արխիտէկտների ընկերական դաշնակցութեան» (Verband deutscher Architekten und Ingenieur Vereine) կողմից է իւր սկիզբն առել մի շատ գովելի և յիշատակի արժանի կերպարանք ստացաւ։ Արդէն անցեալ տարի վերը ասուած դաշնակցութեան այստեղի բաժնի կողմից տեղւոյս պրոֆեսոր պ. Նայրոյթէր յայտնել էր այն գաղափարը, թէ ժամանակ է արդէն շարունակել յառաջ տանել Լուդովիկոս I Բաւարիոյ թագաւորից սկսած և նորա մահից յետոյ մինչև այսօր գրեթէ բոլորովին կանգ առած գործը—այն է կանգնել հասարակական մեծադիր շէնքեր, որպիսին դատաստանական պալատ (Justizpalast), ժողովրդական ներկայացուցիչների տուն (Landtags oder Parlamentsgebäude) և այլն. որոց համար մասնաւոր շէնքեր Մինխէնը դեռ ևս չունի։ Յառաջ քան այս գաղափարը կառավարութեան կամ համայնքին առաջարկելը, հարկ համարեց յիշեալ ընկերութիւնը անցեալ օրը (մարտի 8-ին) մի հրապարակական ժողով հրաւիրել, ուր նա կամենում էր ժողովրդի ձայնը անմիջապէս լսել, թէ արդեօք սա ընդունում է այս առաջարկութեան պրինցիպը։ Երբոպայում գլխաւոր բանը պրինցիպի ընդունելն է, իսկ այս դէպի գործ փոխարինելը երկրորդական, և ամենադիւրին աշխատանք է, որովհետև իսկոյն կազմվում է մասնաժողով գործը մշակելու և գործադրելու համար։

Անհամար բազմութեան ժողովը բացեց նախագահ պրոֆէսոր պ. Նայրոյթէր, կրկնելով առաջարկութեան գաղափարը և հրաւիրելով ցանկացող մասնագէտներին ատենախօսել և իւրեանց կարծիքը յայտնել։ Ամենից առաջ ամբիոնը ելաւ տեղւոյս պատկերների թանգարանաց (Gemaldegalerie) դիրեկտոր պ. Ռէբէր, որ և գեղարուեստից պատմութեան և գեղագիտութեան (էստէտիկա) պրոֆէսոր է և պարզ, ազատ և գրաւիչ խօսքերով ապացուցեց այսպիսի ազնիւ առաջարկութեան նշանակութիւնը և նորա անհրաժեշտութիւնը Մինխէնի պէս մեծ քաղաքի համար։ Նորա խօսքերի քանակութիւնը համառօտապէս հետևեալն էր։ Ատենախօսը զարմանում է, որ մեր կրթուած, արուեստներով ծաղկած լուսաւորուած դարում կարող էր յանկարծ Մինխէնի պէս երևելի քաղաքում մի այդպիսի հարց նոր յայտնուել։ Հին յոյներին և հռոմայեցիներին այս երևոյթը մինչև անգամ ծիծաղելի կերևար, քանի որ այդ տեսակ շէնքերը մի մայրաքաղաքի համար ըստ ինքեան հասկանալի են։ Բայց ինչ էր պատճառը, որ ներկայիս կառավարութիւնը այն ատիճան անուշադիր թողեց այդ խնդիրը, որ մինչև անգամ հարկաւոր էր նորան դրդել. ահա թէ ինչ։ Հին ժամանակը և մինչև հանրապետութեանց կամ սահմանադրական միապետութեանց հիմնուելը միահեծան թագաւորներն էին, որք թէ գեղարուեստի համակրութիւնից թէ նոյն իսկ անձնական փառասիրութիւնից չարժուած՝ ամեն յարմար դիպուածից օգուտ էին քաղում ժողովուրդը ոգևորել դէպի այդպիսի փառահեղ շէնքեր։ Իսկ այժմ վարչութեան սանձը, հետևաբար և դրամական կառավարութիւնը ժողովրդի ներկայացուցիչների ձեռքը անցած լինելով, վերջիններս, ի հարկէ միշտ ժողովրդի նիւթական շահերը աչքի առաջ ունենալով, համարում են այն ամեն ծախքերը, որ առօրեայ նեղ կարիքների չրջանից դուրս են, իբրև շռայլութիւն։ Իսկ այժմեան տէրութեանց տարեկան բիւդժէտների մէջ առաջին տեղն են բռնում մշտական զօրքեր պահելու ահագին գումարները (որովհետև հանգամանքների բերմամբ սոցա գոյութիւնը իբրև անհրաժեշտութիւն նկատուած է), որոց ի նկատի ունենալով, մարդ լոկ նիւթական կարիքներից դուրս մի իդէալական բանի վերա մտածել անգամ դժուարանում է։ Բայց չը պէտք է մոռանալ, որ որքան վսեմ և բարձր անձներին, թագաւորներին, իշխաններին վայել են փառաւոր պալատներ, նոյնքան վայել են սոքա և բարձրագոյն, վսեմ գաղափարներին։ Եւ միթէ, ճշմարիտ պարզ հասկանալի չէ, որ օրէնսդրութեան, դատարանի, պարլամենտի պալատները, բարձրագոյն ճեմարանները, դպրոցները պէտք է և արտաքուստ կենդանի վկաներ լինեն այն գաղափարների մեծութեան, որոնք նոցա բնակիչներն են. և միթէ վսեմ գործի և վսեմ արտաքուստը չը պիտի աւելի շարժէ ժողովրդի յարգանքը և համակրութիւնը։—Ատենախօսը վերջացրեց իւր խօսքը բազմութեան թնդագին կեցցէներով և ծափահարութիւններով։ Այնուհետև խօսեց ստատիստիկայի և ազգային տնտեսութեան պրոֆէսոր պ. Հաուշոֆերը, բոլորովին համաձայն նախընթաց ատենախօսին, միայն իւր ցուցակութիւնը յայտնելով ներկայի կրիտիկական դրութեան վերա, որ ի հարկէ դժուարացնում է ժողովրդի ներկայացուցիչների քայլերը այսպիսի հարցերում։ Սորան հետևեց պրոֆէսոր պ. Սեպպ, որոյ ոգևորուած, վառվռուն և խոր սրտից բղխած խօսքերը ամեն բոպէ ընդհատվում էին միաձայն կեցցէներով։ Նա երկար խօսեց և ընդհանրապէս ամրապնդելով յայտնած գաղափարը, կամենում էր միայն ապացուցանել, որ պատմութեան մէջ յայտնի երևելի հասարակական շէնքերը լոկ թագաւորների կամ իշխանների արդիւնք չեն, այլ շատերը ժողովրդի ոգևորութիւնը չինած է։ Նա անդադար կրկնում էր, թէ այս կէտում նա բոլորովին հանրապետական է, որովհետև, ասում էր ատենախօսը, հին Յունաստանի, Հռոմի, վերջը իտալական քաղաքների,—Ֆլորէնցիայի, Վենեցիայի և այլն հասարակական և պատմական փառահեղ շէնքերից մեծ մասը հանրապետութեան, ժողովրդի ինքնավարութեան և ինքնաճանաչութեան արդիւնքներ են։ Նոյն իսկ մեր սիրելի հայրենիքում, Գերմանիայում, ասում էր նա երբ ազատ քաղաքների դաշնակցութիւնը և մի և նոյն ժամանակ գերմանական ազգութեան ոգին տիրապետում էին, ահա այն ժամանակն էր, որ յիշատակի արժանի հասարակական շէնքեր, պատմական արձաններ կանգնեցան, որոց անմահ վկաներ են Կէօլն, Մայնց, Ռէգենսբուրգ, Բազէլ և այլ գերմանական քաղաքները։ Ուրեմն ժողովրդի ոգևորութիւնն է գլխաւոր ֆակտորը այդ տեսակ գործերի։ Յոյները պարսկական պատերազմից յաղթանակով դուրս գալուց յետոյ իւրեանց բոլոր բարոյական և նիւթական ուժերը լարեցին, փառահեղ հասարակական շէնքեր, պատմական անմահ արձաններ կանգնելու համար։ Մենք էլ, ասում էր նա, մենք էլ ահա տուեցինք մեր պարսկական պատերազմը և յաղթանակով դուրս եկանք. ուրեմն ժամանակ է և հարկէ գառնալ դէպի վսեմ ազգային ներքին գործը։ Ճառը վերջացաւ երկարատև ծափահարութիւններով և միաձայն կեցցէներով։ Այնուհետև խօսեցին երևելի նկարիչ պրոֆեսոր պ. Լինդէնշմիտ, արձանագործ պրոֆ. պ. Վազնմիլլէր և միւսերը։ Վերջը պ. Նախագահը նորից կրկնելով առաջարկութիւնը, նկատելով որ հարկէ կանգնել ներկայի պահանջմանց ապագայ սերունդին և պատմութեանը նուիրելու շէնքեր (Monumentalbauten), որով արխիտէկտուրան և սրան ընտանի գեղարուեստները, որպիսի են արձանագործութիւն, նկարչութիւն, քանդակագործութիւն և այլն, ահագին զարկ կը ստանային և այդպիսով բարձրագոյն գեղարուեստից դպրոցների թարմ ուժերին գործունէութեան լայն ասպարէզ կը բացվէր, խնդրեց ձայներ։ Առաջարկութիւնը ընդունվեցաւ միաձայն առանց մի հատիկ բացառութեան։ Ժողովը տևեց երեկոյեան 8½ ժամից մինչև 11½ ժամը։

Յովհաննէս Լալայեանց

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

—

Դավրէժ 4-ին մարտի

Ներկայ տարուայ փետրվարի 20-ին Դավրէժու ընթերցարանի ընկերութիւնը, ընդհանուր ժողով կազմելով, ներկայացրուց իւր տարեկան գործունէութեան հաշիւը։

Ընթերցարանը իւր երկու տարուայ գոյութեան ընթացքում ստացել է հետևեալ գրքերը.

Առաջնորդարանից	80—հատ.
Ընթերցարանի փողով գնուած.	169—
Դավրէժու բնակիչներից նուիրած	98—
Կ. Պոլսի ազգայիններից նուիրած	437—
Հաշտարխանից նուիրած . .	17—
Թիֆլիսից նուիրած	3—
Ընդամենը	804 հատ

Ընթերցարանի դրամական հաշիւը.

Ընթերցարանը 1876-ի սկզբում ունէր իւր կասայում. .	162—կրան
Նոր մուտք հիմնադիր և բաժնորդ անդամներից, նաև այցելուներից	1126—կրան
Ընդամենը	1288—կրան
Յիշեալ գումարից նոր գտնուած գրքերի և այլ և այլ ծախսերի համար դուրս է գնացած. . .	841—կրան
Կասսայում այժմ մնացած է .	447—կրան
Ընդամենը	1288—կրան

Այս հաշուից յայտնի է, որ ընթերցարանը իւր երկու տարուայ գոյութեան ընթացքում 804—հատ գրքերի տէր լինելուց յետոյ, և իւր բոլոր կարասիներն ու պարագայքը գնելուց յետոյ, այժմ ունի պատրաստի դրամ 447 կրան։

Ընթերցարանի ընկերութեան նպատակը լինելով նպաստել ոչ միայն Դաւրէժի ժողովրդին, այլ թէ Պարսկաստանի բոլոր հայաբնակ քաղաքներն շահուած լինէին նրանից,—իւր կանոնագրութեան համեմատ մինչև այսօր աշխատել է իւր որպէս նուէր ստացած գրքերի աւելորդ օրինակները ուղարկել ուրիշ քաղաքներ։ Օրինակ Թէհրանի դպրոցի ընթերցարանին նուիրել է 52 հատ գրքեր։

Ընթերցարանը երկու տարուայ ընթացքում ստացել է հետևեալ լրագիրները և ամսագրերը։

Տաճկաստանից՝—1 Մասիս, 2 Լրագիր, 3 Փունջ, 4 Արևելեան Մամուլ, 5 Մեղու, 6 Լոյս, 7 Արարատ, 8 Հայրենիք, 9 Թատրոն ծաղրական, 10 Թատրոն Մանկանց, 11 Նոր Դար, 12 Արշալոյս Արարատեան, 13 Փունջ օրաթերթ, 14 Սիոն, 15 Turquie, 16 Phare du Bosphore։

Ռուսաստանից՝—1 Մշակ, 2 Մեղու Հայաստանի, 3 Դպրոց, 4 Արարատ, 5 Հայկական Աշխարհ, 6 Փորձ, 7 Голосъ։ Թէհրանից՝—Իրան,—ընդամենը 25 օրինակ։ Այս լրագրներից և ամսագրերից միայն 4-ի համար մինչև այսօր ընթերցարանը փող է վճարել, իսկ մնացեալները ստացել է որպէս նուէր կամ ուղղակի խմբագրներից, կամ մասնաւոր անձինք փողը վճարելով ընծայել են ընթերցարանին։

Որպէս գրքերի, նոյնպէս և լրագրների վերաբերութեամբ ընթերցարանը մինչև այսօր ջանք է գործ դրել, որքան ներում էր ճանապարհների հաղորդակցութիւնը, իւր ստացած լրագրներից (ատանալուց մի չարաթ յետոյ) ուղարկել Պարսկաստանի զանազան քաղաքներում և առաւելապէս Թէհրան, ոչինչ վճար չը պահանջելով։

Ընթերցարանի ընկերութիւնը բոլորովին բարեգործական սկզբունքի վերա հիմնուած լինելով, իւր գլխաւոր նպատակը ունեցել է զարգացնել և պատրաստել նոր սերունդը, այս պատճառաւ Դաւրէժու ազգային դպրոցի աշակերտներին թողել է անվճար թէ ընթերցարանը յաճախելու, և թէ գիրք կամ լրագիր առն տանելու համար։ Բայց այս տարի նոյնը որոշուեցաւ և եկեղեցականների համար, թէ քահանայ լինի և թէ ոչիրացու.—ընթերցարանի մուտքը և դրանց համար ձրի է այսուհետև, և կարող են առանց վճարի գրքեր կամ լրագրներ տանել կարդալու։

Ընթերցարանի ընկերութեան նպատակը չէ միայն նեղ հայկական չրջանին բաւականութիւն տալ իւր գործունէութեամբ, այլ նա միշտ աշխատել է և պիտի աշխատէ, որ օտարազգիներն նոյնպէս օգտուէին նրանից։ Այս մասով ընթերցարանի վարչութիւնը աշխատել է, որքան ներում էր իւր նիւթական վիճակը, բերել տալ նաև զանազան օտարազգի գրքեր, որոնց թիւը հասնում է այժմ 217 հատորի։ Եւ ընթերցարանը մասամբ հասած է համարում իրան իւր նպատակին, որովհետև նա իւր բաժանորդների թւում ունի այժմ մի քանի եւրօպացիներ և պարսիկներ։

Ի նկատի առնելով այն օժանդակութիւնները, որոնցով մեր հեռաւոր և մերձաւոր ազգայիններն նպաստեցին ընթերցարանի յառաջադիմութեանը,—առաւելապէս մեր պօլսեցի եղբայրները իրանց ջերմ համակրութեամբ օգնեցին ընթերցարանի գործին։ Մեր ներկայացրած հաշուից յայտնի է, որ ընթերցարանի ունեցած գրքերից 437-ն նուիրուած են մեր պօլսեցի ազգայիններից։ Եւ այս նուէրների մասին ընկերութիւնս պ. պ. Ց. Ֆէներջեանի և Ց. Հաջիեանի աշխատութեանը պարտական է, որոնց պարտք է համարում յայտնել իւր խորին շնորհակալութիւնը։

Մեր Ռուսաստանցի եղբայրներն նոյնպէս չը զլացան իրանց լումայ ձգել այս հասարակային բարեգործութեան գանձանակի մէջ։ Հաշտարխանից պ. Պերճ Պաչչանցի շնորհիւ ստացուեցան 17 գրքեր, որոնցից մի քանիսը ինքը պարոնը նուիրել է, իսկ մնացեալն հաւաքել է ուրիշներից։ Բայց ցանկալի էր, որ ռուսաստանցիք, որպէս մեզ ոտմանակից և որպէս աւելի մօտ մեզ, առաւելապէս օգնէին բազմակարօտ պարսկահայոց կրթութեան գործի մէջ։

Եւ կը գնէի այստեղ մեր պատուելի նուիրատուների անուանց ցուցակը, բայց զգուշանալով, մի գուցէ վիրաւորեմ շատերի համեստութիւնը, այս պատճառաւ զանց արեցի. միայն ընթերցարանի արձանագրութեանց մէջ միշտ անմոռաց կը մնայ այն բարեգործների յիշատակը, որոնք ձեռնտու են եղել մեզ այս հասարակաց օգտին ծառայող գործի մէջ։

Վերջացնելով նամակս, հարկ եմ համարում անել մի նկատողութիւն մեր բարերարներին։ Գուցէ այս նկատողութիւնը շատ անհամեստ լիներ, բայց յոյս ունեմ, որ կը ներեն մեզ, տեսնելով, թէ որ ատիճան իրաւացի էր նա։—Մենք իրաւունք չունենք մերժել այն նուէրները, թէ գիրք լինէր և թէ լրագիր, որ բարեբար ձեռքով մեկնում են մեզ. մենք միշտ կը մնանք գոհ և շնորհակալ։ Բայց մտածելով, թէ մի հիմնարկութիւն, որպէս է ընթերցարանը, որ ունի իւր առանձին նպատակը, որ նախատեսմանել է իրան մի որոշ ուղղութիւն,—թողնելու է, որ նա ինքը ընտրէ իւր ընթերցանելի գրքերը, որովհետև նրան աւելի յայտնի է, թէ ինչ աւելի օգտաւէտ է իւր ընթերցողներին,—այս պատճառաւ ստացուած գրքերից շատերն մնում են անդործածելի։ Եւ որպէս զի մեր բարերարների նուիրատուութիւններն լինէին աւելի նպատակաւոր, ցանկալի էր, որ նրանք փոխանակ գրքերի (մեր խօսքը օգտաւէտ գրքերի մասին չէ) ուղարկէին մեզ արծաթ, թող նա լինէր աննշան մի գումար, փոյթ չէ, որովհետև մեծ ջրակոյտերն հէնց կաթիլներից են գոյանում։

Եւ մանաւանդ ընթերցարանի ընկերութիւնը այս տարի նոր ծախսեր ունենալով, աւելի գրական օժանդակութեան կարօտ է։ Մինչև այսօր ընթերցարանը զետեղուած էր առաջնորդարանի նեղչին յարկի սենեակներում. բայց զանազան անյարմարութիւնների պատճառով, ընկերութիւնը այժմ դիտաւորութիւն ունի կառուցանել

մի առանձին չինուածք։ Ծախսի մի մասը խոստացուել է նպաստուել ազգային դպրոցի կողմից, իսկ մնացեալը պէտք է մնայ ընկերութեան և մասնաւոր բարերարների վերա։

Ատենադպիր ընթերցարանի ընկերութեան
Յ. Մէլիք-Յակոբեան

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Ստացանք յօգուտ Վանի հրդեհից փնասվածների պ. Ի. Բ-ից 5 ռուբլ։

***

Մեզ գրում են ԵՐԵՒԱՆԻՑ՝ «Մարտի 11-ին գիշերը մեր քաղաքում մեռաւ Ռուսաստանի քուրդ ազգաբնակութեան ներկայացուցիչը և ռուսաց զինուորական ծառայութեան մէջ գեներալ-մայորի աստիճանին հասած ծերունին՝ Զաֆար-Աղա։

***

Այս համարում ընթերցողը կը կարդայ պ. Վասիլ Խօջայեանցի պատասխանը։ Ասում են որ հայերը ապերախտ են,—բայց այդ սուտ է.... Ցեսնում էք ինչքան չնորհակալութիւն է յայտնում պ. Խօջայեանը իր մասին գրած փոքրիկ նկատողութեան համար։ Որքան ուրեմն աւելի մեծ չնորհակալութիւններ կը յայտնէր նա մեզ, եթէ մենք գրէինք նորա ամբողջ կենսագրութիւնը....

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԿՈՒՐՑՕՎ.

Պատիւ ունեմ յայտնել թէ ԹԻՖԼԻՍԻ, թէ այլ քաղաքների հասարակութեանը որ իմ գործարանը պատրաստում է ԵԿԵՂԵՑԱԿԱՆ սպիտակ ՄՈՄԵՐ, իտակ և բնական մոմից, առանց որ և է խառնուրդի։ Իմ առուտուրը գտնվում է Սիօնի փողոցի վրա, ԹԻՖԼԻՍՈՒՄ, Անանովի քարվանսարայում։

Գինը պուդի համար 29 ռուբլ։

Մոմերի բնական և ընտիր լինելու մասին պատասխանատու եմ։

3—3 Ի. ԿՈՒՐՑՕՎ.

Իւր հաշուով տպագրել ցանկացողին առաջարկում եմ գնել երևելի Պիցցեատի՝ «Մի կաթիլ ջրի ճանապարհորդութիւններ» գրքի հայերէն թարգմանութիւնը ռուսերէնից մի թերթ վարձատրութիւն տալով ինձ. այն է 10 ռուբլ իւրաքանչիւր տպագրական թերթի համար։ Ընդամենը 16 թերթ է։

Տեսնելու՝ թէ որքան յաջողակ է գրքի ընտրութիւնը և թարգմանութիւնը Հայոց ուսումնարանների և ընթերցասէր հասարակութեան համար, ցանկացողները թող ուղարկեն իրանց հասցէն, որի ստանալուց յետոյ կուղարկենք իսկոյն թարգմանութիւնը։

Ուղարկել ինձ նամակ այս հասցէով Господину *Николаю Егоровичу Чигіанову* *Въ С. Петербургѣ* домъ № 91 по *Лиговкѣ*, кв. № 16. 2—3

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ներսիսեան Հայոց Ազգային-Հոգևոր Դպրոցի Հոգաբարձութիւնը, պարտաւորութիւն համարելով յարգել յիշատակը հանգուցեալ Աւետիքայ Մովսիսեան Փիրօյանց, կարգաւորել է, կատարել հոգեհանդիստ նորա գերեզմանի վրա Սուրբ Նշան եկեղեցւոյ գաւթումը, ապրիլ ամսոյ 7-ին Աւետեաց տօնին, հինգշաբթի օրը, պատարագից յետոյ։ Այս մասին յայտնում է Թիֆլիսոյ Հայ հասարակութեանը։ Արժանայիշատակ Փիրօյեանցը, կտակաւ նուիրել է Ներսիսեան Դպրոցին մի հոյակապ կալուածք, որի արդիւնքը գործ է դրվում յօգուտ նոյն դպրոցի։

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ներսիսեան Հայոց Ազգային-Հոգևոր Դպրոցի Հոգաբարձութիւնը, պարտաւորութիւն համարելով յարգել յիշատակը հանգուցեալ Յովսէփայ Յովհաննիսեան Էֆէնդեանց, կարգադրել է կատարել հոգեհանդիստ նորա գերեզմանի վրա վանքի սուրբ Աստուածածնայ եկեղեցւոյ գաւթումը, ապրիլ ամսոյ 3-ին, Նոր կիւրակէի օրը, պատարագից յետոյ։ Այս մասին յայտնում է Թիֆլիսոյ հայ հասարակութեանը։ Արժանայիշատակ Էֆէնդեանցը, իւր կենդանութեան ժամանակը, կտակաւ նուիրել է Ներսիսեան դպրոցին մի նշանաւոր գումար, որի տոկոսիքը գործ է դրվում յօգուտ նոյն դպրոցի։

ՊՐՕՎԱՆՍԱՅԻ իսկական ՁԷԹ, ֆունտը 60 կոպէկ։

ԸՆԴՈՒԶԻ ՁԷԹ ֆունտը 40 կոպէկ։

Կարելի է ստանալ Ա. ՅՈՒՐԻՆՕՎԻ և ընկ. մագազինում, ԹԻՖԼԻՍՈՒՄ։ Въ Тифлисѣ у Цуринова

8 (8)—1.

ВЪ ТИФЛИСѢ У ЦУРИНОВА

ГЛИКОНИНОВОЕ МЫЛО СИШЕЛЬ
Большая медаль за заслуги
8, RUE VIVIENNE, 8
PARIS
На всемірной выставкѣ въ Вѣнѣ.
На всемірной выставкѣ въ Парижѣ.
Мыла, носящія названіе глицериновыхъ, вообще несодержатъ въ себѣ ни малѣйшаго слѣда этого вещества, и единственно въ гликониновомъ мылѣ Сишель можно найти это основаніе.
1. Сишель привилегированнымъ способомъ достигъ соединенія глицерины съ жирнымъ жаркомъ, изъ чего приготовленное мыло придаетъ кожѣ бѣлизну, бархатистую нѣжность и эластичность, вслѣдствіе чего оно превосходитъ всѣ до сихъ поръ изобрѣтенныя мыла.
Это чрезвычайно душистое мыло, вошло во всеобщее употребленіе въ элегантномъ свѣтѣ, и вслѣдствіе своихъ несравненныхъ гигіеническихъ свойствъ рекомендуемо всѣми парижскими врачами.

ՍԱԼԻՑԻԼԵԱՆ

միջոց ատամների համար

Լ. Է. ԱԴԷԼՀԱՅՄ

ատամաբոյժի

Փորձված լինելով բժշկական պրակտիկայով, սալիցիլեան պրեպարատները, բժշկական առաջին հեղինակութիւնների հետազօտութիւնների շնորհով ստացան մեծ անուն, որպէս առողջապահական ամենալաւ միջոցներ բերանի և ատամների համար, առաջարկվում են հեղուկի (բերան ողողելու համար) և ատամների փոշիի ձևով, նրանով են յայտնի, որ պահպանում են ատամները փչանալուց և ոսկորի փտելուց, առաջ են առնում ատամների վրա քարի կազմվելուն, այժ են տալիս ծնոտին և բերանին հաճելի թարմութիւն են տալիս։

Գինը ատամների սալիցիլեան

էլիկսիրի	1 ր. 25 կ.
» » փոշիի	1 » 25 »
» » պաստայի	1 »
» » մաստիկի (ատամները պլոմբելու համար)	1 »
» ատամների կաթիլներ. »	50 »

Այդ արդիւնքը օպտով և մաս մաս ծախվում է ԹԻՖԼԻՍՈՒՄ Ց. Ս. ԾՈՒՐԻՆՕՎԻ և ընկ. մօտ։

Въ Тифлисѣ у Цуринова 9 (12)

ՄԱՐՏԻ 21 — ՏԵՂԵԿԱՑՈՅՑ — ԹԻՖԼԻՍ 1877

ԹԻՖԼԻՍԻ ՎԱՃԱՌԱՆՈՑ
(Մարտի 20-ին)

	Ր.	Կ.
Ոսկին (պոլումպերիալը)	6	70
Հին 82 պր. մ. արծ. 1000 մ.	1200	—
Հին 20 կ. 72 պր. 1000 »	1025	—
Վիդրիշնի 5% առաջի փոխառութեան տոմ. 100 »	190	—
Երկրորդ 5% վիդրիշնի »	187	—
Մարսելի կուրսը 312 ֆր.	100	—
Լօնդօնի կուրսը Օդեսայի վրա.	8	12
Վենայի կուրսը ածէ 156 գլ.	100	—
Դաւրեժի բաթթը. . .	4	53
Առևտրական բանկի ակցիան 200 մ. . . .	280	—
Փոթի Թիֆլիսեան երկաթուղու ակցիան 125 մ.	130	—
Շաքարը բրօցկու . .	6	60
» միւս տեսակը.	6	35
» չաքարաւազը .	5	70
» տրանզիտը. .	5	50
» մաքսը վճարած	8	50
Բամբակը Երևանու Ամերիկայի սերմից. . .	6	40
Միւս տեսակը հին սերմից.	5	50
Բուրդը թուշի . . .	—	—
» թարաքամի .	3	80
Աղիւս Շորագալու . .	1	40
» Երևանի. . . .	1	20
Գարին.	1	—
Մոմը բնաճարպի (стеар.)	11	50
Մետաքս Նուխվայ թոյլ	120	—
Կախեթունը. . . .	65	—
Կոկոնը Նուխվայ (բոժ.)	—	—
Ֆրիզոնը (լասը) Ագուլեաց	—	—
Կոֆէն մօկօի. . . .	21	—
» Լիվանի . . .	16	—
» մարտինկօյինը .	13	—

ՀԵՌԱԳԻՐ

	Ր.	Կ.
Կովկասի և Անդրկովկասի քաղաքները . . .	1	
Նոր-Նախիջևան, Աստրախան, Ղրիմ, Մայրաքաղաքներ և Եւրոպական Ռուսաստան . . .	2	
Աւստրիա . . .	3	
Անգլիա. . . .	4	
Գերմանիա. . .	2	88
Թուրքիա . . .	3	25
Ֆրանսիա . . .	3	75

ՆԱՒԵՐ (Շրջական գիծ)

Օդեսայից Փոթի (ամառը) հինգշաբթի ժամը 3 ին կէս օրից յետոյ։

Փոթիից Օդեսա երկուշաբթի 8 ժամին առաւօտեան։

Օդեսայից Փոթի (ձմեռը) հինգշաբթի 3 ժամին։

Փոթիից Օդեսա հինգշաբթի առաւօտեան։

Փոթիից Կ. Պոլիս կիրակի առաւօտները։

Կ. Պոլսից Փոթի կիրակի առաւօտները։

(Ուղղակի գիծ)

Օդեսայից Փոթի երկուշաբթի 3 ժամ. կէսօրից։

Փոթիից Օդեսա շաբաթ 8 ժամ. առաւօտ։

ՓՕԹԻ-ԹԻՖԼԻՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

Թիֆլիսից մինչև Փոթի (ճանապարհորդների գնացքը) 9 ժամին 36 րոպէ առաւօտեան։ Մինչև Միխայլօվօ (խառն գնացքը) երեկոյեան 4 ժամ. 54 րոպէ։

	առաւօտ.	երեկոյեան
Թիֆլիսից	9. 36	4. 54
Գորի.	12. 32	9. 11
Միխայլօվօ	2. 15	11. 25
Քութայիս	8. 33	
Փոթի.	11. 46	
	առաւօտ.	
Փոթիից	8. 38	
Քութայիս	11. 59	
Միխայլօվօ.	5. 56	1. 06
Գորի.	7. 33	3. 36
Թիֆլիս	10. 16	7. 24

Թիֆլիս գալիս է առաջին գընացքը երեկոյեան 10 ժ. 16 ր. երկրորդը՝ առաւօտեան 7 ժ. 24 ր.

Տեղերի գինը՝ Թիֆլիսից

	I կլաս.	II կլ.	III կլ.
Մցխէթ .	90	68	38
Գորի. . ,	3. 20	2. 40	1. 33
Սուրամ .	5. 22	3. 92	2, 18
Քութայիս	9.	6. 75	3. 75
Փոթի . .	13. 1	9. 75	5. 42

ՓՕՍՏ

1) Ամեն տեսակ թէ նամակներ, թէ լրագիրներ՝ Ռուսաստան և արտասահման ուղարկելու, ընդունվում են ամեն օր, առաւօտեան 8 ժամից մինչև 12 (բացի կիրակի օրերից)

2) Բաղուի ճանապարհը՝ թեթև փոստը ընդունվում է երեքշաբթի և ուրբաթ օրերը, իսկ ծանր փոստը երկուշաբթի։

3) Երևանի տրակտը՝ ամեն օր։

4) Փոթի-Թիֆլիսեան երկաթուղու գիծը՝ ամեն օր, բացի կիրակի օրերից։

5) Նուխու տրակտը՝ թեթև փոստը ընդունվում է չորեքշաբթի, իսկ ծանր փոստը կիրակի օրերը։

6) Բէլիկլիուչի ճանապարհը՝ ամեն տեսակ փոստ ընդունվում է երկուշաբթի և ուրբաթ օրերը։

Ռուսաստանից և Արտասահմանից փոստը ստացվում է Թիֆլիսում ամեն օր։ Բացի տրակտից՝ երեքշաբթի և շաբաթ օրերը։ Երևանի տրակտից՝ երկուշաբթի, հինգշաբթի և շաբաթ։ Փոթի-Թիֆլիսեան երկաթուղուց ամեն օր։ Նուխու տրակտից՝ չորեքշաբթի և կիրակի։ Բելիկլիուչի տրակտից՝ երեքշաբթի և շաբաթ։

ՆԱՄԱԿՆԵՐ

	կոպ.
Բաց նամակը ածէ. .	4
Ռուսաստան նամակը	8
Գերմանիա, Աւստրիա	8
Ֆրանսիա.	8
Անգլիա	8
Շվեյցարիա	8
Թուրքիա (Կ. Պոլիս .	8
Թուրքիա (ցամաք) . .	8
Իտալիա . . .	8
Ամերիկա	28
Պարսկաստան . . .	10
Հնդկաստան . . .	70
Եգիպտոս .	27

ՓՕՍՏԻ ԿԱՌՔԵՐ

Թիֆլիսից Վլադիկավկաս փոստի կարգերը գընում են ամեն օր, երկուանգամ օրը։

«ՄՇԱԿԻ» ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

—Երևան։ Վ. Ե. Դուք ասում էք որ մի քանի համարները չէք ստացել։ Մենք հարցրինք փոստը։ Որովհետև այս տարի մենք մարկաներով չենք ուղարկում, այլ իւրաքանչիւր բաժանորդի համար սկզբից ենք փոստի ծախսը վճարում և փոստատանը իւրաքանչիւր բաղաքի համար յայտնի, որոշ թիվ ենք յանձնում, ուրեմն տեղը անպատճառ պէտք է հասած լինի։ Հարցրէք Երևանի փոստատան մէջ. եթէ չը կայ, երևի ուրիշները ձեր տեղը վերցրին։ Բայց այնու ամենայնիւ որպէս բացառութիւն կարող ենք նորից յիշեալ համարները ուղարկել։

—Բաղու։ Խ. Ֆ. Մ. Շնորհակալութեամբ ստացանք Բաղուի բաժանորդների այս տարվայ ամբողջ գումարը։

—Սարասբուրգ։ Ե. Ձեր նամակը կը տպենք և կը տարածենք ձեր ազդանունը։ Շատ ուրախ ենք որ «Մշակի» համակրողների թիւը աւելանում է։

—Թիֆլիս. Կ. Ի. Մ. Թիֆլիսում կայ այժմ և քաղաքային փոստը։

Дозволено цензурою 19 Марта 1877 г Тифлисъ. Типографія Мартиросіанца Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ